

ՄԱՅԱԿԱՆ

ԳԱՒԱՌԱՑԻՆԵՐՈՒ ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍԸ

Ա. ՏԱՐԻ

15 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1911

ԹԻԻ 5

Խմբագրապետ

Մ. ԻՓԷՔՃԵԱՆ

Արտոնագրատեր

Հ. ԹԱՊԻՊԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեծամիս Վարիչներ (խմբ.)

Նշանակալի

Ջեմալիս Դիսուր (քարզմ.)

Սալբ մր սո՛ւր մա՛յր (քանոն.)

Կեղծ Քարեւորներ (քանոն.)

Գրական Մերձեցման Հարցը

Գիտակցիկ

ՄԻՆԱՍ ԻՓԷՔՃԵԱՆ

ԱՐԳԱՄ ԳՆՈՒՆԻ

Գ. ԷՍԵՐԵԱՆ

ՄՈՄԻԿՈՂ ԿԱՌԱՎՈՐՆԵԱՆ

ՅԱԿ ՀԱՆՆԻՍ ՄԷԴԱՊԵՆԻ

ԱՍԵՐԱՆ ԴԿԱՏԻԿԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ԱԹԷՆԱՆ

Գաւառային Լուրեր

ԱՄՍԻՍ

Տպագր. ՅՈՎԻՏԱՆԵԱՆ ԵՆ ԵԱՐՏԵՐԵԱՆ

«ԱՄԱՍԻԱ»-Ի ՀԱՍՏԷՆ

آماسیہ دہ آماسیہ غزنہ سنی مدیریتہ

Խմբագրութիւն «ԱՄԱՍԻԱ» Կիսամետայ հանդէսի-Ամասիա
Rédaction de la Revue «AMASSIA», a Amassia (Turquie d'Asie)

ԱՄԱՍԻԱ

Կը հրատարակուի ամէն ամսու 1ին եւ 15ին, բուրժերէն եւ հայերէն
բաժիններով: Թուրքերէն բաժինը մօտաւորապէս 4 էջ, իսկ հայերէնը 12
էջ, երկու բաժինը միասին միշտ 16 էջ պիտի ըլլայ: Բաժանորդներուն
տարեկան 2½ քիւ պիտի տրուի:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Թուրքիա տարեկան	4	միւս	1	Արսաստանան տարեկան	5	ֆր.
» վեցամետայ	0.50	»	1	» վեցամետայ	2.50	»

Բաժնէկիրը բացարձակապէս կանխիկ է: Խանութիւններու համար ա-
ռանձին նպաստաւոր պայմաններ կը տրուին:

Տաւր օրինակ «Ամասիա» սպառողին մէկ օրինակ նուէր:

ԱՄԱՍԻԱՅԻ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Քերթիս տեղական ցուիչն ու հաւաքիչն է Պր. Յովսէփ Բալուեան, որուն մեր տեղա-
կան բաժանորդները իրենց բաժնեգիրները վճարելով պարտին ստացագիր պահանջել:

ԲՈՂՈՐ ԹԵՐԹ ՍՏԱՑՈՂՆԵՐՈՒՆ

Անոնք որ մինչեւ ցարդ իրենց լրկուած քերթերը եւ լրկեցին եւ ո՛չ ալ երկու-
շուկ մը իրենց լրկուած քերթին դպարումը պահանջեցին օրինաւոր բաժանորդներ առ-
ձանագրելով՝ սկսանք քերթի առաջումը շարունակել: Հետեւաբար թող բաւեմանին փու-
թացնել բաժնեգիրները, քերթիս բաժնեգիրին բացարձակապէս կախիկ ըլլալը նկատի
առնելով:


ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Մէյմէկ տարեկան «Ամասիա» կը նուիրեն:

Ամասիային Տիար Գեորգ Ժակոյեան՝ Պոլիս Տիար Ա. Մանուկեանի:

Սիվադէն Տօֆ. Լեւոն Սիւնի՝ Սիվազ մըքքը Բարբըի:

Ամասիային տար Յովհաննէս Շրամեան՝ Գասթեմունի տար Մարտիրոս Փափագեանի:



ԳԱԽԱՌԱՑԻՆԵՐՈՒ ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍԸ

Ա. ՏԱՐԻ

15 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1911

ԹԻՒ 5

Խնրագրական

ՄԵԾԱՄԻՏ ՎԱՐԻՉՆԵՐԸ

Վերջերս Պօլսական թերթերու մէջ տեսանք, թուրքիոյ բազմը ասկէ առաջ իրենց ձեռքին մէջ իբր փառասիրութեան միջոց գործածող երկու նախարարներու յայտարարութիւնն, որոնք կ'ըսէին «թէ հայրենիքը կործանման վիճակին մէջ ալ ըլլայ, և մեզ առաջարկուած Միւսթէշարութիւնը ընդունելով՝ վստահ ըլլանք թէ պիտի փրկուի՝ կրկին չենք ընդունիր»:

Այսպիսի մեծամիտ յայտարարութեան մը թողած տպաւորութիւնը ուրոշապէս կարելի է չափել. և տարակոյր չունինք թէ զանոնք մինչև այդ նախարարական ակտիւն բարձրացնող անձինք զգացին իրենց ընտրութեան յուսախաբութիւնը: Ի՞նչ կարելի է սպասել այսպիսի մտայնութիւնով օժտուած անձերէ, որոնք ամբողջ հայրենիքին գոյութեան համահաւասար կը նկատեն իրենց անձնական ՆՍԻՆ փառասիրական ոգին:

Հայ երեսփոխան մը երբ իր հայրենիքը վերադարձած պահուն կ'երթայ խնդրել խնդրել առարկայ նախկին ներքին գործոց նախարար Թալէաթ պէյին, որ Ատանայի գծրազդ հայութեան մնացորդներէն մահուան դատապարտեալ 4 եղբայրներուն գոնէ խնայուին. նա նոյն պահուն իր հպարտ մերժումովը կը բզբաէր ամբողջ հայութեան սիրտը: Դարձեալ երբ Արաբական զանգաւանները սկսան ծայր տալ, նոյն այդ խմբակը իր անգիտակից մեծամտութիւնովը, զէնքի ուժով ուզեց իր քմահաճոյքը իրագործել: Իսկ

վերջին Արցախական ապստամբութիւնը, երբ ափ մը ժողովուրդ իր հերոսական ոյժերուն յենուած՝ կռուեցաւ իր իրականց պաշտպանութեան գիտակցութեամբը, ողջակի արդիւնքն էր այդ մեծամիտ ինքնավստահութեանց: Նոյնին արդիւնքն էն նաեւ այսպէս հետզհետէ մէջտեղ երիտզաւորանի, կրեւէի, և դեռ ուրիշ շատ մը պարագաները:

Մենք ՀԱՅԲԻ մէջ ներկայիս գոյութիւն ունեցող տարրերու թշնամական ոգին, աւազակային այս բռնադրաւումները, ոճիրները, բռնի խոյամացումները և աներեւակայելի վայրագութիւնները, տարիներէ ի վեր հողալին ձգձգումը, ի՞նչի արդիւնք է. և ո՞վ է ասոնց պատասխանատուն՝ եթէ ոչ մեր մեծամիտ զեկավարները, որոնց ցոյց տուած անտարբերութիւնը բնականօրէն խորհիլ պիտի տար զուլումի հեղինակներուն թէ՛ «մեծերը կը քուշալեն զիրենք»: Եւ արդէն չէ՞ որ այդ էր իրենց ալ հասկցնել ուղածը:

Զէ՞ որ սահմանադրութենէ անմիջապէս վերջ մեծ հայրենասէրներն էին որ կանչուեցան պատասխանատու գործերու: Անոնք բռնապետական շրջանին մէջ արտասահմանի յեղափոխական գործիչներն էին. և այս ինքնին գրաւական մը չէ՞ր թունդ հայրենասիրութեան: Երբ մէկը հայրենասէր է՝ խորհուեցաւ թէ կրնայ կարող վարիչ մ'ալ եղած ըլլալ: Սփայն գառն փորձառութիւնը եկաւ հաստատել թէ անոնք հայրենասէրներ չէին, այլ պարագայական աղբեցութեանց ներքեւ իրենց մեծամիտ զգացումներուն գերին:

Դժբաղդ է մեր հայրենիքը, որովհետեւ իրական հայրենասէրները բռնորոշելու յատկութիւնը չունի. կրկնակի դժբաղդ է՝ որովհետեւ դեռ հայրենասէր նախարար մը չունեցաւ՝ որ գէթ իր մէջ զգացած ըլլար ժողովրդային պահանջներուն, ցաւերուն և տառապանքներուն գոնէ նախնական կէտերը:

Ո՞վ օրուան պատասխանատու վարիչներ, քանի մը վայրկեան ձեր շուրջը դիտելու քաջութիւնը ունեցէ՞ք, տեսէ՞ք թէ արդէն դժբաղդ երկիրը ի՞նչ վիճակի վերածուած է. մէկ ծայրէն միւսը չի կայ անկիւն մը, ուր կեղծ հայրենասէրներու յառաջ բերած արհաւիրքին ենթակայ եղած չ'ըլլայ:

Վանի շրջակայ ժողովուրդը, աւազակներու զուլումէն տեղական կառավարութեան օժանդակութեամբ ազատելու յոյսէն իսկապէս յուսահատած, կը դիմէ բանտը բանտարկուող աւազակապետներու միջնորդութիւնը խնդրելու որ ազատեն զիրենք աւազակախմբերու յարձակումներէն: Մուշի, Պիլիշի, Տիարպէքի, Խարբերդի և բոլոր հայաբնակ գաւառներու անկիւններէն տալէն օր հեռագիրներ կը տեղան պատրիարքարան, զիմումներ կ'ըլլան՝ միայն կեանքի ապահովութեամբ համար: Կը տեսնէ՞ք մեծամիտ հայրենասէրները, ժողովուրդը ուրիշ բան չուզեր: Հողալին հարցը մուգեր

է, հայը մտոցեր է, քաղաքակիրթ աշխարհին վայելած բազմազան առաւելութիւնները չի ինչեր. այլ միայն կը խնդրէ իր կեանքին ապահովութիւնը:

Այլ կը բաւէ որքան աճաբարական խաղերով օրօրեցիք ամբողջ Օսմանեան քաղաքացիները, տարիներու փորձառութիւնը պէտք էր սորվեցուցած ըլլար ձեզ թէ ճշուող, հալածուող, հարստահարուող, և ամեն զուլումներու ենթակայ ժողովուրդներ ունեցած են համբերութեան ժամանակակից մը, որ մէկ տարի, յոսահատութեան վայրկեանը կողոպտի, երբ կ'որոշէ իր շղթաները կամ փշրել՝ կամ խեղդամահ ըլլալ:

Հայ գաւառական բարբեր եւ սովորութիւններ

I

ՆՇԱՆՏՈՒՔԸ

Նախորդ իրիկունը կիրականութեամբ էր և այդ իրիկունը տեղի ունեցաւ Պ. Ն...-ին նշանօրնութեան նախօրէր: Գաւառական նախօրէր մը, որ առաքինաբար ու պարզակ էր: Այդ իրիկունը՝ եկեղեցիի աւաթումէն վերջ՝ փոքրիկ բազմութեան մը գետ կը մնար ներսը: Այդ բազմութեան մէջ կը նշմարուէին քանի մը կիներ ալ, որոնք քիչ մը ետեւք խումբ մը կողմած նստած էին և կը խօսակցէին: Գետ նշանօրնութեան սկսուած չէր, առանց խօսակցութեան նիւթը կը վերաբերէր վայրկեան մը վերջ կատարուելիք նշանօրնին: Անոնցմէ ոմանք կատարուած ընտրութիւնը շատ յարմար կը նկատէին, ուրիշներ՝ անյարմար. ոմանք աղջիկը կը քամանքէին և աղուն արժանիքները վեր կը հանէին, ուրիշներ ալ հակառակը կը պնդէին: Վրճարանութիւնը հեռուէն տուր հանգամանք մը առնելու վրայ էր, երբ բազմութեան նոր խումբ մը եկեղեցւոյ տուազ դռնէն ներս մտնելով՝ առաջագոյն դէպի ատենին մօտ: Հոն այրելի բաժնուեցան երկու մասերու. մաս-

շուն պարագաները նստան աջ կողմը, իսկ աղջկան պարագաները ձախ կողմը: Նախ երկ կիները՝ որոնք մէջ կը գտնուէին նախ մանչուն և աղջկան մայրերը և ազգական նախնիները, խառնուելով հոն գտնուող կիներուն փոքրաթիւ խումբին. աջ կողմը՝ քիչ մը ետեւք՝ իրենց տեղը գրաւեցին: Մանչուն կողմէն բաժնուեցան մօմեր: Լուսարարը սկսաւ վառել շամերը, որոնք կը հաղկուէր թէ ջահովառութեան նամար դրամ գանձեր էր եկեղեցւոյ երեսփոխանը: Ատենին մէջտեղը, ձերտակ ծածկոցով սեղանի մը վրայ դրուած էր նշանը, որ կը բաղկանար մանչ ու աղջիկ կողմերէ եկած մէյսէկ ոսկի մատանիներէ՝ մետաքս թաշկինակներու վրայ անցուած: Այդ սեղանին շուրջ բոլորուած էին բոլոր քանանները և եկեղեցւոյ դպիրները: Հանգիստականները երկու մօմերը վառեցին: Աւագերեցը սեղանին մօտեցաւ և կտոր մը թուղթին վրայէն սկսաւ կարդալ. — Մանտար Կ... աղա Մ... ետեի որդի Պ. Ն... ընդ Փ... հան Վ... ի դուստր՝ Օր. Ե... Զեռայ իր խոսքը

հանդիսականներուն ուղղելով՝ «երկու կողմն ալ հաւանութիւն ունի այս նշան-տուքին, դուք յարմար տեսած էք. ճիշտութիւն, արգելքներ կան»։ — «Ո՛չ, արգելքներ չկան, մենք յարմար տեսած ենք»։ պատասխանեցին հանդիսականներէն մէկ քանին։ Աւագերեցի «Աստուած շնորհաւոր ընէ»էն վերջ՝ ակըստան քահանաներն ու դպիրները միաբերան երգել «նշանաւ ամենայաղթ»ը։

Եկեղեցւոյ այդ ընդարձակութեան մէջ տեսչութիւնը խաւարած ձայնը կարծես վեհութիւն մը կուտար հանդէսին։ Մոմերը կը պլպլային, իրենց յարաշարժ կտուցները կը ստուերագծէին հանդիսականներուն ուրախ դիմագիծը։ Շարականը լըմընցած էր։ Աւագերեցի վերջուց երկու մատանիներն ալ և կանչելով իր մօտ երկու կողմին կնքաշայրերը՝ աղջկան կողմէն բերուած մատանին յանձնեց մանչուկնքաշայրին և մանչուն կողմէն բերուած մատանին՝ աղջկան կնքաշայրին, շնորհաւորելով խօսեցեալները ի բաղակայութեան և աչքըլուսելով խօսեցեալներու ծնողներուն և պարագաներուն։ Ամէն կողմէն սկսան բարձրանալ «Տէրը շնորհաւոր ընէ»ի խօսքեր։ Նշանօրնութեան արարողութիւնն լմնրած էր։ Հանդիսականները դուրս ելան։ Բակին մէջ մէկ կողմը կայնած էին մանչուն, իսկ միւս կողմը՝ աղջկան շայրնու կնքաշայրը, որոնք հանդիսականներուն շնորհաւորականները կ'ընդունէին։ Շատ մօտիկ ազգականներ և բարեկամներ եկեղեցիէն ուղղակի մանչուն կամ աղջկան տունը գացին, խօսեցեալներնալ անձամբ տեսնել ու չէր արհարելու համար։ Նշանաւորը լմնցած էր։

Տալէ յետոյ գաւառի մէջ տեղի ունեցող և գաւառական բարքեր ներկայացնող նշանտուքի սոյն դրուագը, ինչ կը զետեղենք նաև այդ մասին մեր խորհրդ-

դածութիւնները։

Գաւառական - Հայկական հին բարքերն ու սովորութիւններ այնքան ալ արտամարտի չեն, անոնք իրենց մէջ ունին շատ մը առաւելութիւններ, միայն թէ մի քանի սրբազրութիւններ անհրաժեշտ են։ Նշանտուքեան այս ձևին մէջ գանուած առաւելութիւններէն մէկն այն է, որ ժողովուրդը իր ամենէն աւելի նուիրական ճանչցած մէկ վայրին մէջ կուղէ հաւաքել, բնականօրէն սրբազան կապ մը հաստատելու համար։ Միւս առաւելութիւնն այն է, որ նշանտուքեան այդ կապը կը կապուի ժողովրդեան և կրօնական պետերուն ներկայութեան, ինչպէս հանդիսաւոր կերպով խօստովներ կ'ըլլան ու հաւանութիւններ կ'արուին։ Ծիշդ է որ արարողութիւնները քիչ մը աւելի մըթիք երևոյթ կը ըլլան և ժողովրդական բոլորէն աւելի զրօնական գոյն կ'առնեն, բայց մեզ համար էականը այդ չէ. հոգ չէ թէ նշանտուքեան յայդ ձև տեղի ունենայ — և պիտի ունենայ քանի դեռ մեր մէջ աւմուսնութիւնը եկեղեցւոյ խորհրդներէն մէկը կը նկատուի — միայն պէտք է շրջակէնք որ ժողովուրդը հեռոյնտէն աւելի լայն իրաւունքներ ունենայ այդ բարքերուն մէջ և սխալներ սրբազրութիւն ժամանակի պահանջումներուն համաձայն, և սովորութիւնները բարեփոխուին ժամանակին հետ։ Մենք գաւառացիներու շատ զխանք որ ասկէց առաջ նշանաւորը կատարուած ասին կը բաւեր միայն մը կատարուած ասին կը բաւեր, աղջիկը և ծնողներուն կամքը առնել, աղջիկը և տղան բնաւ ձայն չունէին. անոնց կամքն ու հաւանութիւնը անարժէք էր։ Ժամանակ անցաւ և այսօր մենք կը տեսնենք թէ վերջին ձայնը մանչուն կամ աղջկանն է (1)։

(1) Տակաւին կը գտնուին այս մը գաւառներ, ուր աղջիկը ու մանչը բնաւ ձայն չունին իրենց նշանաւորութեան եւ ամուսնութեան մէջ։ Անոնք կ'ամուսնանան իրենց ծնողի հրամանով՝ առանց նոյնիսկ զննար նանչնալու։

Գեո շատ չէ անցեր այն օրէն ի վեր, երբ մանչ ու աղջիկ, առանց գիրար ճանչնալու կ'ամուսնանային: Այսօր ալ դեռ կատարելու պէս չէ լուծուած ազատ ընտրութիւններու նարդը, բայց հետզհետէ զէպլ լաւագոյնը ընթանալու ճամբուն մէջն է: Անհրաժեշտ ու կենսական է որ երկու խոնջեալներ նախ քան իրենց նշանուիլը, գիրար լաւ ճանչնան, կշռեն ու չափեն իրարու յատկութիւնները և ըստ այսմ կնքեն իրենց համաձայնութիւնը՝ միասին ապրելու և ընտանք կազմելու հանար: Այս նախնական գործողութիւնները ամենայնուրջ պահանջներ են կեանքի բարօրութիւնը ապահովելու համար: Իսկ այնուհետեւ թող հաւաքուին եկեղեցիին կամ տան մէջ, այդ մընեոյնըն է, ժողովուրդին ներկայութեանը

պաշտօնապէս զօդելու այդ կայր: Այս պարագային ալ անհրաժեշտ է խօսեցեալներուն ներկայութիւնը՝ նոյն այդ բազմութեան մէջ, բազմաձայն իրլից հանդիսաւոր ակնարկներուն վրայ և աւագերեցը փոխանակ այդ կատարուած նշանաւոր նշանուողներուն պարագաներուն հաւանութեան եւթարկելու, եւթարկէ ուղղակի խօսեցեալներուն հաւանութեան:

Ալ ատենն է որ կամայ կամայ մեր սխալները սրբագրենք և յարմարինք ժամանակին: Մոլեռանդութիւններն ու նախապաշարումները կեղծապարելի կը դարձնեն և կը թողուն մեզ ազիստութեան վիճին մէջ. որքան հնար է օր առաջ ազատիլ ջանանք անոր ժանգոտած ճանկերէն:

ԱՐԳԱՄ ԳՆՈՒՆԻ

ՃՄԱՐԻՏ ԳԻՏՈՒՆԸ

Երիտասարդներ, դուք ամէնքդ, որ կը ժամանէք գիտութեանց ասպարէզը՝ բերելով հոն ձեր տարիքին կենդանի և մաքուր եռանդը, բնաւ մի մարէք ձեր մէջ այդ աղնիւ զգացումները սնտիստութեան կամ չաղգախնդրութեան շահադիտութիւններով, որոնք կ'զբաղեցնեն և կը յուզեն մեր ժամանակի մարդոց մեծագոյն մասը: Թող ձեր մշակ նպատակն ըլլայ ձեր իմացականութեան զարգացումը: Ջանաղէք նախ մարդել, ձկնել, կատարելագործել ձեր մտքի զսպասակները գրականութեանց ուսումնասիրութիւնով: Մտիկ մի լնէք անոնց որոնք կ'արհամարհեն գայրութիւններն: Երբէք տեսնուած չէ որ աւելի գիտնական ըլլալու համար նուազ գրագէտ ըլլալ պէտք ըլլայ: Գրականութիւնը մշտնապէս պիտի կրնայ սորվեցնել ձեզ մտածուած փափկութիւնները ուճը նրբերանգութիւնները, տալ ձեզ կատարեալ հասկացողութիւնը այն գաղափարներուն զորս յղացած պիտի ըլլաք, և ձեզ ուսուցանել յստակօրէն զանոնք ար-

տայայտելու արուեստը՝ բուն սահմաններով (terme): Այսպէս պատրաստուած, դիւրին պիտի ըլլայ ձեր ընծայութիւնը գիտութեանց առաջին գաղտնիքներուն:

Այդպէս ընծայարկութեան զօրացուցէք մանաւանդ ձեր միաբլ աւելի վերացական ուսումնասիրութիւնով որ բոլոր մշակներուն արամաքանական սկզբն է: Երբ ճաշակէք վայելքներու երախայրիքը զորս իւրաքանչիւրը ձեզ կուտայ, ընտրեցէք հոնիին, հրապուրչը, և աշխատեցէք մշակել զայն: Եթէ հրապոյրը փոխարկուի աղնիւ կիրքի յանձնուցէք այն հրապոյրին որ զձեզ կ'առնէ: Եւ երբ ձեր յարատեութեանը արժանացնէ զձեզ մուտ գործել գիտութեան այդ նախընտրուած սրբարանին մէջ, ամբողջովին նուիրուեցէք իր պաշտամունքին՝ ամբապինդ սիրով մը: Այն ատեն մի ունենաք այլևս ուրիշ փոռասիրութիւն այլ քօղամերկեցէք ձեր ժամանակակիցներուն և ապագայ սերունդին այն անկորնչելի ճշմարտութիւններէն մէկ քանին զորս ան-

սանձան բնութիւնը կը ծածկէ մեզմէ տա-
կաւին :

Թերեւս խուժանը անգիտանայ ձեր ա-
նունը և չգիտնայ թէ դուք կ'ապրիք,
բայց դուք պիտի ճանչցուիք, պիտի գը-
նահատուիք, պիտի փնտռուիք երկրա-
գունտի ամբողջ մակերեսին վրայ բաժ-
նուած հայկապ դէմքերու փոքրամաս-
նութենէ մը, որոնք ձեր մրցակիցը, ձեր
ընկերն են խնայականութեան տիեզերա-
կան ժողովարարին մէջ, և որոնք իրա-

ւունքը պիտի ունենան միայն գնահատե-
լու և սանձանելու ձեզ կարգ մը, արժա-
նաւոր աստիճան մը ուրիշ պիտի չկրնան
իջեցնել զձեզ ոչ նախարարի մը ազդե-
ցութիւնը, ոչ իշխանի մը կամքը, ոչ
ժողովրդական քմահաճոյքը, ինչպէս պի-
տի չերանջին բարձրացնել զձեզ հոն, և
այդ փառքը պիտի մնայ ձեզ այնքան ժա-
մանակ, որքան դուք հաւատարիմ ըլլաք
գիտութեան՝ որ զայն ձեզ կուտայ :

Փարզմ. Թրանսէ Գ. ԷՍԵՐԵՆԷՆ

Biot

ՍՈՒՐ ՄԸ ՏՈՒՐ, ՄԱՅՐ

Սուր մը տո՛ւր, մայ՛ր, երբամ, մըխեմ
Բրոնաւորին սիւսք դըմխեմ,
Որ մաքրուի աշխարհն անկէ,
Ան մեր հանգիստն կը վրձանգէ :

Սուր մը տո՛ւր, մայ՛ր, որ ես անով
Առնեմ եռանդ, ոյժ ու կորով
Փրօրեմ գանկը քրեամիին՝
Քրուն աչքերն խոժոռ նային :

Սուր մը տո՛ւր, մայ՛ր, զիս կը կոչէ
Հայրենիք, խուք ու խոչէ՝
Ես չեմ վախեալ, կ'ընդունեմ յար,
Սուրք նողերուն ջերմ սիրահար :

Սուր մը տո՛ւր, մայ՛ր, անաքեկով
Որ շեռ խրեմ վաւերուն կող,
Պիղծ արիւնք ժայթի առաս,
Լուայ կոյսն անով հակիկն արաս :

Սուր մը տո՛ւր, մայ՛ր, սո՛ւր եկասայրի
Ձեզիս զառով սիւսքս կ'այրի,
Շուտով դառնամ ես յաղթական,
Օ՛ն, բոյ դադրի լացդ ու կական :

Սուր մը տո՛ւր, մայ՛ր, դաւաճաններ՝
Ձորոնք անուշտ դժոխսն է ծրներ,
Հարկէ փրօել քաւալ, գրոր,
Ջրեցել խոնիրս՝ նենգ ու մոլոր :

Սուր մը տո՛ւր, մայ՛ր, գիւցի՛ր ինչպէս,
Մեծնալ կըրցայ բսիկնով ես,
Այժմ ալ սուրն է՝ շնորհիւ որուն՝
Կրնամ ապրիլ այլ օրերուն...

Մարգուան

Մ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ԿԵՂՄ ԲԱՐԵՐԱՐԻԵՐ

Ըսէ՛ք, խրնդրեմ, ո՛ւր կերբաք Ըորեմ
Ժպտով մը հեգնոս, դեմով մ'անցորեմ՝
Գրքալո՛ւ արդեօք այն մահամերձին,
Որ վաղը շիրիմ գուցէ պիտ' տանին :

Բրտեմքն ու արիւն փամեցիք երկ,
Իսկ դըրամ տալու այսօր եկեր եք.
Ձ'չ, նա պէտք չունի ձեր ողորմութեան,
Նա վրեժ ունի ձեզ համար միայն :

Ա՛յ դըրամներ, ծնուած արիւնքն,
Իրեն կը տանիք. — վաստակն է արդէն.
Վրեժձրն իր հետ բոլ իսպառ մեռնի,
Երէ ձեր գուրին ինքն է արժանի :

Մօտն իր սնարին նստած եմ այժմէն
Իրեն պէս խեղձեր, որ զինք խնամեն.
Մ'երբաք, մի՛ պղծեք իր սիրուն զրուկ,
Հոն սոսկ կը գտնեք աղփան ու սնանկ :

Ձեր պալատէն դուրս՝ փարբամ, նոյն ու սեզ՝
Ինչո՛ւ եք ելած, ո՛ն, ինձի քսեք.
Պուրսը արցունք կա, խեղներ կան անոք
Ա՛յր' կ'ուզեք լքել ու տեսնել զանոք :

Բայց, ո՛ն, ինչ քսեմ, չունիք դուք լանցանք
ճանցանք մերն է որ որքը դարձանք
Ձեր՝ որ կեղեիք քուտաւներն ենք
Եւ ողորմութիւն տալու, արդ, ելեք :

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԵՂՄՈՆԵՒ

ԳՐԱԿԱՆ ՄԵՐՁԵՑՄԱՆ ՀԱՐՅՈՒ

Քանի քանի անգամներ գրուած, պէտքը չեղաւած, բայց այդ ուղղութեամբ ոչ մէկ լուրջ աշխատութիւն կատարուած պէտք մըն է, զոր կ'ուզեմ անգամ մը ես կրկնել:

Սահմանադրութենէն տարրերու համեմատաբար կ'ընենք կ'երթանք, միութիւններ, քիււպներ կը կազմենք, հանգէտներ կը սարքենք, բայց դարձեալ մըշտ կը դժգոհինք թէ չենք կրնար յաջողիլ, արդեօք ինչո՞ւ համար:

Համեմատաբար կարենալ գոյացնելու և կամ տեղանքութիւնը ապահովելու համար պէտք է որ նախ պետութիւնը կազմող տարրերը զիրար լաւ ուսումնասիրած ըլլան, լաւ ճանչցած ըլլան: Պարզ սիրած ըլլան, լաւ ճանչցած ըլլան: Պարզ բան է թէ ես մէկու մը հետ երբ կ'ուզեմ բարեկամութիւն հաստատել նախ կ'ուսումնասիրեմ անոր ազնիւ կամ վատ կողմերը, լաւ կամ գէշ բնատրութիւնները, վերջապէս մէկ խօսքով անոր ներքինը: հոգեբանութիւնը: Առանկ պէտք չէ՞ ըլլայ նաև ազգերու համար: Ցեղերու մշտնջանութեան մեծագոյն ազդակներէն և հիմնական միջոցներէն մէկը ուրեմն անա ասիլա է. — փոխադարձ վստահութիւն և իրարաճանաչութիւն:

Վերը լսուեցաւ որ ազգերու հոգեբանութիւնը պէտք է լաւ ուսումնասիրած ըլլանք: Բայց թէ ի՞նչ մըջոցով: Ասիկա կարելի է ամէնէն աւելի ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՈՒՄ, որովհետև գրականութիւնը գերազանցապէս միաբերու, հոգիներու, զգայումներու արտայայտումն է: Մէկու մը խօսքերէն կարելի է ճանչնալ ներքին, մարդը, այսպէս ալ ազգի մը գրականութիւնը ուսումնասիրելով կարելի կ'ըլլայ ճանչնալ անոր հոգեբանութիւնը, վերջապէս ամբողջ էութիւնը և բարոյական մարդը, մինչդեռ մենք ոչինչ ըրած ենք այդ նպատակին հասնելու հա-

մար. — Թր. մեզմէ քանիներ կը ճանչնան թուրք գրականութեան վարպետները, քանիներ գաղափար ունին անոնց գրականութեան վրայ կամ քանիներ ծանօթ են հիւսիսէն Շէյխ Կալիպի, Բէմալ պէյի, Շիւսաբի, Թուզուլիի, Նէֆիի, Նէսիբի և նորերէն Ապահելազ Զամիա, Թէվֆիգ Ֆիքրէթ, Խալիս Զիա, Ճէնապ Շահապէտօղլու, Էքրէմ, Հիւսէյն Ճաֆա պէյերու և ուրիշ չափերու. — զոր յիշել աւելորդ պիտի ըլլար — գրական, բանաստեղծական կամ վրպական հիմնաւրի գործերուն:

Շատեր նոյն իսկ անտեղեակ են անոնց գոյութենէն, և յետապի է որ մենք, չափաւոր, զննողարարի մեծամասնութիւնով մը քանի մը տեղ չգնելու, անկարելի է որ նկատելու և կամ ընդհակառակն մեր գրականութիւնը աւելի բարձր գտնելու յաւանդութիւնն ալ կ'ունենանք, ես չատերէ լսած եմ որ հայ գրականութիւնը, մինչև ներկայիս, իբր թէ աւելի գեղեցիկ և նուրբ եղած ըլլայ քան թուրքականը: Մինչդեռ իրականութեան մէջ լուրջովին հակառակն է տոտր, նոյն իսկ աւելի առաջանալու, աւելի ճիւղացնելու համար մեր գրականութիւնը պէտք է մըրջիլ միւս տարրերուն հետ: Այսպէսով թէ մեր գրականութիւնը ներկայ ամպուսթեանէն, կ'մախացումէն ազատած կ'ըլլանք որոշ չափով և թէ նիւթապէս ու բարոյապէս ամէնէն աւելի կապուած թուրք տարրին հետ իրապէս ծանօթացած կ'ըլլանք:

Պէտք է որ մեր մտաւորական դասակարգը, մեր տաճկագէտները ռաւիլիայ և միջոց հանդիսանան այս գաղափարը իրագործելու համար, պէտք է որ անոնք հրատարակ նետուին ծանօթացնելու համար, թարգմանելու թուրք գրականութեան լաւագոյն արտագրութիւնները:

Այն ատեն է որ զիրար աւելի լաւ պիտի ճանչնանք և մտաւորապէս ու բարոյապէս ճշմարիտ մանրմութիւն մը, համերաշխութիւն մը հաստատած պիտի ըլլանք, այո՛, ազգերու գրականութիւնը լաւագոյն ազգականները կրնան ըլլալ այդ տեսակ համերաշխութեան մը:

Սակայն և այնպէս խօսքով բաւականանալու չէ. այս նպատակին ատակ, ձեռքնաս անձերու պարտք կ'իյնայ գործի սկսել: Հազիւ երբեմն օրաթերթերու կամ շաբաթաթերթերու մէջ կը հանդիպինք ոտանաւոր կամ արձակ փոքր կրտսերներու, պատկերներու, անկէ անդին անցած չունինք, մինչդեռ ատենք չեն կրնար գաղափար մը կազմել տալ և կամ բաղձալուծած արդիւնքի աղանդով, ապիկա պէտք է կատարուի ուղղակի այդ գործին հմուտ անձերու կողմէ և այն ատեն երկու կողմէ ալ ռգտուած կ'ըլլանք. — թէ մեր գրականութիւնը ճոխացուցած՝ և թէ փոխադարձ ճանաչողութեամբ միայն կարելի էր ճիշդ համերաշխութեան գեղեցիկ իրագործիլը գիւրացուցած կ'ըլլանք: Մեր թարգմանիչները կամ նրատարակիչները փոխանակ մշտն եւրոպական գրականութեան կարեւորութիւն ընծայելու պէտք է ուշադրութիւն դարձնեն նաեւ թուրք նորաբողոք գրականութեան, մանաւանդ որ մեծ մասամբ արգել վէպերու, բարոյականը, հոգին փոխանակ ազնուացնելու՝ ընդհակառակն վատասերելու ծառայող գիրքերու տարափն է որ կ'ողողէ գրական հրապարակը: Եւ չեմ քաշուիր նոյնիսկ լսելու թէ շահագիտութիւնը պզտիկ դեր չունի ատենց մէջ:

Միւս կողմէ, սակայն թուրք մտաւորականութեան անհոգութիւնը և անտարբերութիւնը հայկ. գրականութեան հանդէպ անարդարանալի ու աններելի է, պէտք է որ իրենք ալ ջանան այս ուղղութեամբ աշխատիլ, այսինքն փոխադարձաբար ջանան ծանօթացնել նաեւ

հայ, գրականութիւնը թուրք հասարակութեան. բան մը՝ որ բոլորովին անտեսուած է իրենց կողմէն և անկարեւոր նկատուած:

Ես կը կրկնեմ նոյնը թուրք մտաւորականութեան համար, ինչ որ վերը ըսի հայ մտաւորականութեան համար հանդէպ թուրք գրականութեան:

Անցեալները, թուրք բարեկամներէս մէկը, զարմանքով կը տեսնէր հայ գրագիտունի մը լուսանկարը, հարցնելով թէ իգական սեռէ ալ գրականութեան մշակներ ունէ՞րք, թէ՛ մենք ալ ունէ՞ինք իրենց պէս ասողանդաւոր գրագէտներ, բանաստեղծներ ևլն...:

Ինչո՞վ մեղադրելի է ան իր անգիտութեան համար, երբ չեն գտնուած մարդիկ որ ծանօթացնելու միջոց ըլլային: Այս մասին թուրք մտաւորականութեան պարտականութիւնը աւելի մեծ և աւելի ծանր է, բայց անոնք պարտաւոր են նուաւսարապէս զբաղիլ քրիստոնեայ տարրերու գրականութիւնով:

Պէտք է մենք ալ մեր կողմէ ջանանք չինայնք այդ գործը գիւրացնելու համար: Անկեղծ խօսք, ես օրինակի համար ոչ մէկ գաղափար ունիմ յունական գրականութեան վրայ, և վստահ եմ որ ինծի պէս շատեր ալ ծանօթ չեն, յետոյ մէյ մըն ալ կ'ըլլենք «... օլմազ, բում էրմէնիյէ տոսթ օլմազ»ի նման անխմաստ խօսքեր լրսելէ չենք քաշուիր:

Կը կրկնեմ, ես այն հաստատ համոզում մը ունիմ թէ հիմնական համերաշխութիւն կարենալ գոյացնելու համար պէտք է զիրար լաւ ճանչնանք, իրարու հոգեբանութեան լաւ ծանօթ ըլլանք, գրականութիւնը անմիջապէս միջոց մը կրնայ ըլլալ, ուստի պէտք է որ առաջ խօսքէն գործի անցնինք և այսպէսով ջանանք իրական և լուրջ կապ մը հաստատել զիգերու միջև. — ապահովել տարրերու մերձեցումը,

Ե, Պօլիս

ՍՏԵՓԱՆ ԱՂԲԱՏԻԿԵԱՆ

ԳԻՏԱԿՑԻՆՔ

Քաղաքական հորիզոնը միտադնած է: Երկրին արտաքին թշնամիները կարծես որոշ համաձայնություն եկած՝ թէ դիւանագիտական մեղրածուր շրթունքներով և թէ՛ բռն՝ սլոժերով կը ջանան մեր երկիրը նեղը դնելով՝ իրենց անկուշտ ստամոքսները լեցնել իւզոտ պատառներով: Իսկ սուղին՝ երկրին ներքին ու իսկական թըշնամին — յետադիմական տարրը — իր դանակարգային շաները պաշտպանելու համար, մոլեռանդ ու անգիտակից խուժանքին իր ձեռքին մէջ գործիք բրած, պղտոր ջուրն մէջ ձուկ սբառու սկզբունքէն մղուելով իր ամենաբուռն ոգիով կը ճգնի երկիրը տակնուվրայել, եթէ կարողացաւ, երկրն զեկն՝ բառ առաջնուն, իր ձեռքը առնելու և կամ հակառակ պարագային, քաղսնի սովորութեամբ, սուրչներու աշխատութեամբ իր քսակը պարարելու համար:

Երկրին այս անորոշ ու տարտամ վիճակին պատասխանատուներն եթէ երբէք որոշելու հարկը տեսնուի, բնական է ամէն գնահակից քաղաքացի իր ձայնը պիտի կեդրոնացնէ քաղաքագէտ (?) զեկավարներու վրայ, որոնք թաւշեայ ակունքներու վրայ բաղմած այս ու ան կողմ հրամաններ կը տեղան մինչև այն ատեն երբ երկիրը խաղաղ է և որոշ պատասխանատուութիւն չի ծանրանար իրենց ուսերուն վրայ, բայց երբ պարագաներն ու պայմանները կը փոխուին, իրենց անհատական տկարութեան և կամ ուրիշ պատճառներու համար կը քաշուին իրենց ապարանքները, միանգամ ընդ մըշտ իրենց յաջորդներու անկումը դիտելու, որպէսզի կարողանան լիաթոք խնդալ:

Իրականութիւնը այն է որ թուրքիոյ մէջ տիրող դատակարգը — ըլլայ առատական թէ բուրժուազիական, — անձնուէրներ ու իսկական քաղաքագէտներ չէ ար-

տադրած պահանջուած չափով: Եթէ երբէք երկրին սա տաղնապալի վիճակին մէջ ունենայինք մէկ երկու անձնուէր քաղաքագէտ ու վարչագէտ անձնաւորութիւններ, նախ այս տաղնապար չէր ըստեղծուէր. և եթէ ստեղծուերիսկ, հարկն դիւանագիտական լնթացքներով առանց որոշ վնասի պատուաւոր կերպով գուրս կուգար, անմիջապէս խնդիրը իր ծիլին մէջ խեղդելով ու մարելով:

Երկրին արտաքին քաղաքական մեքենային խանգարման ճշմարտ ու միակ պատասխանատուները՝ երկրին զեկավար տարրերուն դիւանագիտական ու քաղաքագիտական որոշ կարողութենէ զուրկ ըլլալուն վերագրելով՝ կ'անցնիմ ներքին սա պղտորումներուն, ջարդերուն, բուռնարարումներուն իրական պատասխանատուները ճշդել, իւր անկեղծ հայրենատէր ու օսմանեան քաղաքացի:

Այս խնդիրին հանդէպ պատասխանատուներն երկու կայգի կը բաժնուին: Մին՝ աւազակաւորեան միացորդներն՝ որոնք իրենց հոգեւորքին մէջ գոյութիւննին պահելու և իրենց դատակարգին շաները դարձեալ ապահովելու համար, իրոնականի դիմակին տակ խցուումներ ու շարժումներ կ'ստեղծեն երկրին ներքին մատերուն մէջ, մոլեռանդ ժողովուրդը մըշտ ձեռքերնուն մէջ գործիք բրած:

Երկրորդ և ամենաչքրական պատասխանատուն է դարձեալ կառավարութիւնը, որ ազգայնամոլական վնասայեր ձգտումներէն մղուած՝ աւատական շարժումին ոյժ և զօրավիզ կը հանդիսանայ և չուզեր՝ անմիջական ու կտրուկ քաղաքականութեան մը հեռեկալ՝ երկրին ազասակալն ու բանուր դատակարգին, գէթ առժամապէս, ինչք, պատիւ ու զոյուրիւնը՝ ապահովել: Երկրին զեկավարներն եթէ քչիկ մը բարեացակամութիւն

ուսնեան և խիստ քաղաքականութեան մը հետեւին, անմիջապէս կը դադարին քաղաքականութիւնները, բռնաբարութեան ու բռնագրաւումները, որոնք սահմանադրական թուրքիոյ պատմութեան մէջ միտ էջեր թողուցին ու կը թողուն, որքան ատեն որ շարունակուին: Սակայն ինչպէս յիշեցի քիչ առաջ, մեր ղեկավարներն, աւատականութեան ու բուրժուազիական դասակարգերուն շահերուն ու անոնց զօրացումն օժանդակելուն և միեւնոյն ատեն ձուլման աննպատակ քաղաքականութիւնը սկզբունք ընդգրկելով՝ լրջութեամբ, թոյլ ու մեղիօրէն կը վարուին դէպք գաւառացի բարբարոսութիւններն ու աշխարհութիւնները, նոյնիսկ անոնց կրօնաւնկերուն պատճառիւ՝ դառնան ու ոյժ կուտան, գաւառներու մէջ լրնց ներկայացուցչներու բռնապետական մնացորդ սպիկար ու բռնապետ պաշտօնեաներու միջոցաւ: Այս քաղաքականութիւնը մեր երկրորդ դէպքի փրկութիւնն էր տանի թէ կարծանում. այդ պատմութիւնը ցոյց պիտի տայ: Դիմելէք անցեալի պատմութեան, սպասեցէք սպագայինին:

Արդ, երբ մեր ղեկավարներն երկրին անդորրութեանը համար կտրուկ ու ազդու քաղաքականութեան չի հետեւելէն ի զստ, թոյլ ու անտարբեր գտնուելով կը պաշտպանեն, այդ վիճակին ստեղծիչները: Եւ երբ երկրին յետադիմական տարրը, այդ պաշտօնական անտարբերութիւնէն քաջայերուած, յանուն կրօնի, կ'սպառնայ ազատական ու բանուոր դասակարգին, ոչ միայն նախական շահերուն, այլ անոր կեանքին գոյութեանը, ինչ կը մնայ քնել, ճշուածներու, շա-

հագործուողներու, բռնադատողներու թալանուողներու և վերջապէս ամէն վայրկեան վտանգի ապրուցելուն մասնաւածներու համար. եթէ ոչ զի տակցելով կազմակերպուիլ ու միտցած ոյժերով պատուար հանդիսանայ բոլոր յետադիմական հոսանքներուն: Այո՛, առանց ցեղի ու կրօնի խտրութեան իսկական սահմանադրաւորներն, ազատասէրներն ու ճշուածները պէտք է փութան կազմաւորուիլ և պաշտպանել երկրին ու իրենց դասակարգին շահերը: Ան որ չի փութար և ամէն միջոցներու չի դիմեր երկրին ու իր դասակարգին շահերուն պաշտպանման համար, աւելի դաւաճան է ու ստորին, քան այն, որ կ'սպառնայ այդ շահերուն խլման:

Ո՛վ իրաւագութիւններ, հերի՛ք սրչափ թոյլ ու անտարբեր գտնուեցաք դէպք ձեր շահերն ու ձեր պատմա-անհատական գոյութեանը. դէպք ձեր բնականական սրբութիւնն ու քաղաքացիական իրաւունքները և վերջապէս դէպք ձեր շայրենիքն ու սահմանադրութիւնը. այլեւ գիտակցելէ՛ք, խորհելով ու պատմականօրէն վճռելով թէ վտանգը կը խաղայ մեր երկրին վրան ու մէջ, սպառնալով մանուկ ու պոչատ սահմանադրութեան ու մեր պատմա-անհատական գոյութեան:

Մ'ն ուշիմն զարթո՛ր, գիտակցի՛ր և ամէն վայրկեան սպասիր վտանգին: Անձնուէր գտնուի՛ր, դէպք երկրին շահերն ու սահմանադրական կարգերը սպառնացող վտանգներու պարագային: Այս կը պահանջէ նայրենասիրութիւնն և իւրաքանչիւր քաղաքացիի քաղաքացիական պարտաւորութիւնը: Օ՛ն, գիտակցութիւնն...

ԳԱՐԵԳՈՒՆ ԱԹԷՆԵԱՆ

ՕՍՄ. ԱՓԱՆԱ. — Ռուսոյա 150 զինուոր կորսնցնելով Պարսկաստանի Դաւրէժ քաղաքը գրաւած ու Ռուսական դրօշը պարզած է: Նաև ամբողջ Հայ մէտայինները որոնք իրեն դիմադրած էին, բնաջիւղ բրած է:

Սայիտ փաշայի դահլիճը իրաւարած է: Նորին բնորութիւնը յանձնուած է դարձեալ Սայիտ փաշայի:

Գ Ա Ի Ա Ռ Ա Յ Ի Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

ԿԵԱՆՔԸ ՍԻՎԱԶԻ ՄԷՋ

1.— Այս տարի տարօրինակ ըլլալով ձմեռնիս չսկսաւ, թէպէտ և առաւունքն ու երեկոները քիչ թէ շատ ցուրտ կրնէ սահման կէսօրները գարնան օդի կրնամանի:

2.— Սանասարեանի, Սիվազի մէջ նաև ճիւղ մը բանալու մասին, խնամակալութեան կողմանէ եկած առաջարկը, սիրով ընդունուեցաւ, և մեր կողմանէ ալ նարկ եղած օժանդակութիւնն ալ սալ խոտադուեցաւ:

3.— Հոս այս օրերս ամենայն խստութեամբ, գուռայի գլխուորները և նոյն իսկ քերթիպի սանի քաշողներն, իսկ կը հաւաքեն: Կառավարութեան այս խիստ բնթայքը, տեղւոյս ժողովուրդը իմաստաւորի քրիստոնեաները, բաւական մը տաճուութեան մասնած է: Տ. Լ. Ս.

ԶԻԼԷԻ ԿԵԱՆՔԷՆ

Զիլէի ճամբորդներ կը պատմեն թէ. անցեալ չաթուան ընթացքին Տէրվիչ մը

երկու ձեռքերը բեկովներէն բռնած, հրապարակին վրայէն «Խաղական պատե-
րազմին յաղթուելնուս պատճառը, այս շուն կեպուր հայերն են, պէտք է ա-
նոնք սատկեցնենք որ իսլամութեան կը-
րօնքը պահած ըլլանք, ասոնք մեր թրշ-
նամիներն են և այլն» պօռալով կը յա-
ռաջանայ, կառավարութիւնն անմիջա-
պէս բռնելով կաքսորէ: Սակայն մենք
կը հարցնենք մեր սահմանադրասէր (?)
կառավարութեան թէ այս տեսակ սոս-
կալի բեախիօցներ մը համար աքսորը
բաւական էր: Եթէ այն Տէվրիչին տեղ
հայ մ'ըլլար, այդ կերպ ընթացքի մէջ
գտնուողը, արդեօք կառավարութիւնը
այս ներողամիտ ոգին զոյգ պիտի տա՞ր
... Ո՛չ, պարտնենք, ո՛չ մինչև որ չի
գիտակցիք և այդ Տէվրիչին նմանները
կախաղան չի բարձրացնէք ու իւրաքան-
չիւր քաղաքաւի քաղաքացիական իրա-
ւունքները ու գոյութիւնը չ'ապանովէք
փրկութեան ճամբուն նետեած չենք ըլլար:

Տ Ե Ղ Ա Վ Ա Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

ԼՍԱՐԱՆՆԵՐ

Տեար Ս. Սապահ - Գիւլեան Եւդոկիա-
յէն վերադառնալով Սօցիալ - Դէմօկրատ
Հնչակեան Գիւպիւն մէջ « Տնտեսական
հարցեր » և « Մեր Դրութիւնը Ռուսաս-
տանում » նիւթերու վրայ կրկին օգտա-
շատ ու շինիչ բանախօսութիւններ ընե-
լով և ժողովրդային լայն համակրութիւն
մը ստեղծելով, մեկնեցաւ Մարզուան,
անկէ ալ անմիջապէս Կ. Պօլիս անցնելով
« Նոր Աշխարհ » հրատարակելու համար:

Ս. Սապահ - Գիւլեանի բանախօսու-
թիւններէն ազդուելով 40է աւելի պատ-
ուաստ անձնաւորութիւններ հնչակեան
նոր անդամներ արձանագրուեցին:

Կ. ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԷՍԸ

Կ. Կարմիր խաչի աշխատանքի սան բաց-
ման նանդէսը տեղի ունեցաւ ամսոյս 11
ին Կիրակի օր Ազգ. Ազգ. Կեդր. Վար-

ժարանին մէջ, ուր բանախօսեցին Տօք.
Արեւ Կիւլպէնկեան, Լեոն Լանիս և Յոն.
Խարմանեան: Դրամական նուիրատուու-
թիւններ ալ հաւաքուեցան, ինչպստ
աշխատանքի սան:

ԱԶԳ. ԿԵԱՆՔ

Ազգ. Առաջնորդարան իրարու յաջոր-
դող հեռագիրներ կ'աւետեն թէ Կ. Պօլ-
սոյ Պատիրարք ընտրուած է՝ ԱՐՇԱՐՈՒ-
ՆԻ Սրբազան, իսկ Ս. Էջմիածնայ Կաթո-
ղիկոս՝ ՅԴԻ ԴԷՄ ՅՑ քուէով ՍՈՒՐԷՆ-
ՆԱՆՑ Սրբազան: Ենթադրելով յաջո-
ղութիւն ու գործունէութիւն կը մաղ-
թենք:

Քաղաքական ժողովի երկու անդամնե-
րը և Ռ.սու.մ. խորհուրդի Ատենադպիրը
հրաժարած են ինչ ինչ պատճառներով
և Ազգային կրթական և այլ ընթացիկ
գործերը երեսի վրայ կը մնան: Մեղքը

պատասխանատուներուն վիզը:

3.— Բազաքիս երեք թաղերու Թաղ. Խորհրդոյ ընտրութիւնը կը կատարուէր չաքաթներէ ի վեր, այս չաքթու ընտրութիւնը վերջացած է: Առայժմ սաչափը ըսենք թէ՛ Ամասիացիներուս համար ուրախառիթ պարագայ մըն է որ պարզուեցաւ: Ասկէ առաջ որ գրեթէ բոլոր ընտրութիւններու պարագային ալ 40-100 քուէ հանդիսուող կ'ըլլար, այս ընտրութիւններու պարագային երկու կուսակցութիւններու մղած ընտրական պայքարին շնորհիւ ժողովուրդը շարժելով 250-440 քուէ եկած է: Պատիւ կուսակցութիւններուն, կեցցէ՛ ժողովրդային շարժումն ու գործունէութիւնը:

ՄԻՆՆԵՒ 45 ՏԱՐԵԿԱՆԵՐԸ ԶԻՆՈՒՈՐ

Օսմ. Երեսփոխանական Ժողովի նախորդ չաքթուան քուէարկած մէկ օրէնքին համաձայն սոյնօրէն սկսեալ 23-45 տարեկան յոյսը քրիստոնէականն ալ իւր բէտիժ ու մուսալմանիքը զինուորներ պիտի ծառայեն իսլամներին: Այս անտրդար սրույման դէմ մենք պիտի արտայայտուինք ու բողոքենք մեր յաջորդ թուր թուրքերէն իրաւներն մէ՛: Ինչոքից դժուարութիւններ որ կան թող փութային մեր գլխուն:

ՈՅԻՐՆԵՐ

Բազաքիս Գրք-Պէտէլ թաղին մէջ նորոգեալ շարժիւ, երբ քանի մը թուրք հայրենակիցներու անշարոյական ու զինպատուարեր ընթացքի մէջ գտնուելուն յուրը կը հասնի կառավարութեան, անմիջապէս բոլորներէ հետապնդելով կ'ուզեն ձերբակալել միջ պարտնները: Այդ ձերբակալման միջոցին եղած ընդդիմութիւններէն երկու բոլորներ բուսական ծանր կերպով կը վերաւորուին:

Իարձեալ անցեալ չաքթուան ընթացքին թուրք տալայ մը և երեսասարդ մը Քէօփրիւ փաշայ թաղին մէջ հայ կնոջ մը տունէն ներս մտնելով ստիպման տակ կը բռնաբարեկանոր պատիւը: Կնոջ օգնուէ:

Թեան աղաղակներուն վրայ կառավարութեան լուր գնալով, կուզան ու կը ձերբակալեն սպան, իսկ միւս երեսասարդ այդ միջոցին փախած կ'ըլլայ: Կեցցէ՛ զինուորականութիւնը...

Ա.ԶԳ. ՀԻԻԱՆԴԱՆՈՑ

Բազաքիս նորակազմ Ազգ. Հիւանդանոցին համար յետագայ նուիրատուութիւններն եղած են հետեւեալ բարեւեր ազգայիններու կողմէ:

1.— Հանգուցեալ Պր. Տիգրան Ճիւլանեան իր կեցանութեան 5 օսմ. սակի կտակած է:

2.— Հետեւայներու ամուսնութեանց առթիւ յետագայ գումարները գոյացած են զանազան նուիրատուներու կողմէ:

Պր. Երուանդ Թէքէեանին ամուսնութեան գոյացած է 63դր. 30փր.: Պր. Անդրանիկ Պա. Կոզեանին 126դր. 30փր.: Պր. Նշան Դաւայեանին 116դր. 30փր.: Պր. Յարութեան ճու ֆահանսին 139դր. 10փր.: Պր. Մարոտ Իսկէնտէրեանին 13դր. 20փր.: Պր. Յովակիմ Թիւթեան ճեանին 113դր. 10փր.: Պր. Կարապետ Դապիկեանին 9դր. 20փր.:

3.— Հայտալէ հետեւայներու անուան տոնախմբութեան գոյացած են սա գումարները զանազան նուիրատուներու կողմէ:

Պր. Ա. Ժար. Ուրզանճեանի անուան տոնախմբութեան գոյացած է 10դր. 10փր.: Պր. Նիկողայոս Թահմիզեանին 10դր. 20փր.: Պր. Նիկողայոս Մազմանեանին 20դր. 10փր.: Պր. Նիկողայոս Դանթարճեանին 5դր. Պր. Թադէոս Արշէեանին 27դր. 30փր.: Պր. Թադէոս Կարաբնեանին 25դր. 10փր.: Պր. Ա. Իքսան Խա. նաբեանին 15դր.:

4.— Զանազան նուիրատուութիւններ. Տարք Մ. Էմմէրեան 50դր. Մ. Օսմ. Զիշթեան 4դր. 30փր. Թադէոս Մանուէլեան 4դր. 30փր. Յովակիմ Արապեան 4դր. 30փր. բարեւեր երկու կիներ 5դր.:

Արսեւահիւ ՀԱՅԱՍՏԱՆԻ, ԹԱՂԻՊԵԱՆ,

Խոնարարացի՝ ՄԻՆԱՍ ԻՓԻՃԵԱՆ,

Տպ. ՅՈՎ. ՆԱՆԵԱՆ ԵՒ ԵԱՐՏԱՅԵԱՆ.

منظومه

تنویر ایدیور عالمی شمدی ضیای عدالت
مدحده شایان کوریلیر او سیهای عدالت
ظالمه ندامت ایتدیردی اعلان ایدیلنجیه
صفوته جهانده اولیور اجرای عدالت
فردی استننا ایدی صائمه مساوت
مظلوملره تسلی ایدن لیلای عدالت
بلبلیری شاقرتدور کلزار ایچره همان
انسانی سرمست ایدر البت صفائی عدالت
سیلمز قیمتی جهانده دلیر عدالتک

چکمزسه بر کره سودای عدالت
اویله محکدر تملی ییقلماز اصلا بر زمان
چونکه حریتله مؤسسدر بنای عدالت
صدقه ایش کوره نی حق تعالی ایدر راضی
قهر اولور بر کون البت بردن اعدای عدالت
ایتمز نصیب ای عمر هر قوله ادبیه نعمتی
کیم ایدرسه صاغ اولسون اطرای عدالت
توقاد مکتب اعدادی دردنجی صنف
طلبه سندن عمر لطیفی

سنقورلی احوالی

بر قاچ هفته مقدم سنقورلینک بوز کوی
قریه سنده تحصلاتده بوانسان کسکین ناحیه سی
مخصلداری خیلی تضیق ایشلر و دفعه قریه
مذکور اهالی سندن موسی آغا نام ترکمنک خانه
سنه یدی نفردن مرکب بر اشقیای چته سی هجوم
ایدرك عائله سنه شکست ناموس بر طاقم حقارت
و پاره ویرملری ایچون تهدیدات اجرا ایللری
اوزرنه قارین و چو جقدرك فریادلرینه قوشان
قومشولردن الیکسی جرح ایدرك صاوشمشلر
محلی حکومتک متجاسرلری دردست ایچون
اجرا ایلدیک تعقیبات شمدیه دکن ثمره سر
قامشدر.

نفردن مرکب اشقیای چته سی هجوم ایدرك
پوسته سورجیسی قتل و ژاندارمیه جرح
ایللری اوزرینه مرقوم ژاندارمه مجروح اولدیی
حالده معلومات ویرمک اوزره درحال قره قول
خانه یه قوشار و قره قول خانه ده کی ژاندارمه لر
محلی واقعه یه یتشهرک اشقیای مرقومانه قارشو
ایدیلان مقابله نتیجه سنده بشیک لیرالق پاکتی
براقدردرلر.

انجق دروننده بشیوز مجیدیه بولان بر پاکتی
غصب ایدرك متجاسرلر فرار ایشلر دردستلری
حقنده اطرافدن ژاندارمه مفرزلری تعقیبات
اجرا ایتمکده ایسه لرده آلان دردسته موفق
اوله مدینی استخبارات موتوفدندر.

مخبر سنقورلو

حرانف

سکر کون مقدم یوزغاد ایله انقره اراسنده
اشلکده اولان پوسته نك اوزرینه بشش سکر

اکسیلمز ، آرتماز . و حدقی حصوله کتیره چک عاملردن اڤ مہمی ده عناصر مختلفه اراسنده اولای
عائله مناسباتی ، صمیمیت افرادی تکثیر ایتدکدر بر برمرزی یاقیندن طایمادجه افکارمرزی توحیده
موفق اولامایز . بو کون مه التأسف اکثر برلرده مسلمان و خرستیان محله لری بیلہ آیردر .
صیفه لرمز مستثنا اولقی اوزره مسلمان محلاتنده بر خرستیان اقامتنه تصادف اولونماز . بوشرا-
نط اجتمای به التئده ادعا ایتدیکمز مساوته نصل رعایتکار اولدیفمرزی بریمی جیقوب صورارسه یالکز
محکمہ لری کوستره جکیز ؟

بر برلردن اوزون مدت آیری یشایان ، عائله لری اراسنده مناسبات تأسس ایدہ مامش ایکی
اوز قرداش بیلہ کوچک بر تفهمدن پک چاپوق متأثر اوله رق یکدیگرینک خاصی اولور .
بونلر هر کون حیاتمزدہ بیکلرجه دفعه تجربه ایتدیکمز حقایق بسیطه دن عبارت اولدیفی حالده
مه التأسف اہمیتلری تقدیر ایدہ میورز ، اوزون مدت طارغین طورانلر ، مسلک لرنده ، فکر لرنده
اختلاف اولانلر کال صمیمیتله برلشوب مناقشه ایتدکجه باریشه مازلر ، هانی عناصر مختلفه دن
مرکب . توحید عناصر مقصدینه معطوف قبوللرمز ؟

والاصل بیلمه لی یز که عناصر عثمانیه نك ماضیلری ایری ، حاللری طارغیندر . آتیلری ده
برلشمزسه ارتق و حدت عثمانیه دن قطع امید ایتک لازمک لور .

برده حکومت کسب قوت ایتلی ، مملکتی بحق اداره به مقتدر ماضیدن متنفر ، استقباله حیا
ضرلاتمش رؤسانک بد حمتنه تودیع امور ایدلی ، صکره ارتق فلان عنصرك آمال مخصوصه
سندن ، فلان شخصك سوء نیتدن بحث ایتک قطعاً لزوم و احتیاج قالماز ، هرکس او قولی
حکومتک تعیین ایتدیکی نظامانه تابع اولور .

ارتق بوندن بویله الله ایچون اولسون بر برمرزی سوہم یکدیگریمزه دوشمان نظریله باقیہ لم
مغرور اولیم ، عالیجناب اولم ، بر برمرزی قوجاقلایم . حکومتی تقویه ایدرك استقبالمرزی
اونک بد اہتمامه براقلم زیرا وطنک سلامتی بونی ایجاب ایدر .

عاشق مریض

اوزاق وارده

اماسیه غزنه سی مدیریت علیہ سنہ

افندم

(اماسیه) نامندہ نشرینہ بذل مقدرت بیوریلان غزنہ کړک اوچنچی نسخہ سی ده کال مباحثات
ایله الدم طوغریسی یا شو همتکزدن زیادہ سیله مخنون قالدہ مملکتیمزک بوکی غزنہ لره احتیاجی
وارستہ قید و تذکارددر سزلری بتون صمیمیتله تبریک ایدرك غزنہ نك دوام و انتشاری آرزو
ایلرم افندم ۳۷۷ کانون اول سنہ ۳۲۷
اماسیه مہمونی عارف فضل

برابر کولیور، برابر دردلیشور، برابر سویور کوروندک، فقط بچون اعتراف ایتیم، محافظه موجودیتلری دیگر عناصرک زوالنده ارامغه حاصل اولان اعتیاد ایله الفت ایدنلر بوندن نمون اولمایدلر. بو، اکثریت ملیهیی تشکیل ایدن عناصر سائرهنک کوستردیکی خلوص و صمیمیت نظراً بر خیانت ایدی؛ بو دوغریدر. فقط بو خیانت سنلردن بری دوام ایدن بر اداره غیر مشروعهنک نتیجه طبعیه سیدر. بو کون حیثیت ملیه مزی جریحه دار ایدن دهانه بیوک ضربه لر کوردک، عزت نفس ملیمزنک قیرلمسندن متولد اضطراب ایچنده نه مشکل دقیقه لر کچیردک ایشته بلغارستان استقلالی، بو سنه هر سک الحاق، کربد مسئله سی، اک صوک طرابلس قاجه سی... بونلره هب تحمل ایدیوروز، دور استبدادک نتیجه طبعیه سی عد ایدرک بونلردن طولای آجیلان یارده لریمزنک استقبالده کی امید مظفریمزنله تدابییه غیرت ایدیوروز.

حال بوکه زه بو مظفریتی ویرمک ایچون اهمیتی او قدر اشکار اولان وحدت اجتماعیه مزی تأمین مسئله سنده عناصر سائرهنک بینه او دوره عائد بقیه سیئات اولارق. کوستردیکی لاقیدی بی عفو ایده میور. اکثریت ملیه نک عناصر مسلمنده اولمسندن متولد بر کبر و نخوتله خصوصنه قارشو خصوصتله مقابله ایدیوروز.

دوشونمکی زکه بو کونا قدر آیری اولانلر بو کون برلشمیورسه اولنری برلشدرمک بزم استقبالمز ایچون لازم اولدیفنه نظراً تأمین وحدته توسل ایتمک وظیفه سیدر اک زیاده زه توجه ایدر. (بی سومیه بی بنده سومه) پولتیقه سی نه درجه به قدر بو وحدتی تأمین ایده بیسلیر؟ بزدن بوسبوتون آیرمقله حیثیمزی اخلال ایدن نه قدر سومدکرمز وارکه بو کون اولنری سویور کچی کورونمکه حتی جبر نفس ایدرک سومکه مجبور اولیوروز. خارجی خصملریمز قارشو بو مجبوریبت حیثیمزه منافی کلمیورده کندی عائلهمزنک ارکانه، مسبوب اولدیغمز وطنک اولاد بینه قارشومی بو قدر جق اظهار محبتی عزت نفسیمزی اخلال ایده جک بر مسئله شکلنده تلقی ایدیوروز؟

اکثریت ملیه بو کون ترک کرده، مسلمانده در بناء علیه حکومت عثمانیه نک تعالی شان و شرفندن اک زیاده مستفید اوله جقده بو اکثریتدر. حال بوکه وحدت عثمانیه بی تأمین ایتدکجه بوغاییه واصل اوله میه جغز. شو حالده تأمین وحدت ایچون ایلک فداکارلق بینه او اکثریت، اکثریت ملیه به توجه ایتیمزی؟ فداکارلقدن مقصدم عناصر مختلفه دن بعضیلرینی نائل امتیاز ایتک، یاخود حائر اولدیفی امتیازاتک توسیفی توجه ایتک دکلدیر. یالکمز خصوصت سیله کورسه ک علو جناب ایله مقابله ایتک لزومی حس ایدیورم.

ایشته عناصر مختلفه اراسنده بیوک بر وحدت عثمانیه وجوده کتورمک ایچون هر شیدن اول ادعا ایتدیکمز خود پرستلکی، حاکمیت طفره فروشانیه بی ترک ایتلی یز، حاکمیتمز بیوکاک کوسترملکه

امانتیه

طشره منادسی

نومرو ۵

کانون اول ۱۵ سنه ۳۲۷

برنجی سنه

وحدت عثمانیه

(دردنجی نومرو دن مابعد)

شو مختصر ایضاحاته نظراً بو کون تأمین وحدت ایللری ارزو ابتدیکمز عناصر عثمانیه اراسنده اوچ دوت یوز سنه لك عدالتسز، مذذب بر اداره نك بر اقدینی صونوقلقلر، منافرتل واردو. شمدی هر کس، هر عناصر دوت یوز سنه دن بری چالشدینی، تعقیب ابتدیکی غایه دن چویرمك یللكز سوز ایله اولاماز. بر کره حکومتی، تابع اولدقلری دولت عثمانیه بی اوقدو معلا بر حاله کتیرملی که هر عثمانی اونك جناح تابعیتده تنفس ایتمکدن بر حصه افتخار بولسون بوده حکومتك هر شیدن اول کسب قوت ایتمسینه اولور که حیات اجتماعیه و سیاسیه هر ایچون دیگر نقاط نظردن دخی بونك اهمیتی وارسته ایضاحدر. قوتی بر حکومته مالک اولورسقه اولاً جهالت عمومیه دن فرصت بولوب اجنبی آمالنی ثرویح ابتدیرمك ایسته بن فسادچیلرك حیات ملیه مزى زهرله بن پر و پاغاندرینه امکان قالماز ثانیاً بیوک بر دولسك شرف تابعیتی قولای قولای صرف نظر ایدله میه جك قدر قیمتدار اولدیغندن بوده ایرجه بر جهت وحدت وجوده کتیرپر.

وحدتی تأمین ایدن الك بیوک اساسی، ماضینك عنصنه نك اشتراکیدر. ماضیلرنده برابر ا مامش، برابر کولامش، کچر دکری ادوار اجتماعیه دن پرلکده متحسین اولامش انسانلر بر لرلینك فکرلرینه پک ضبعی بر بیکانه لك کوسرتیرلر شمدی به قدر عناصر غیر مسلمه ایله ماضیمز دائماً ایری کجدی. بز اغلادیغمز زمان اونلر کولدیلر، چونکه اونلر ایلانقلری زمان سوق جهالتله بزده کولیوردق، بو کون بونی انکار ایتمه می یز. انقلاب مسعود بتون عناصر مختلفه بی لوی حریت الله طولادی. التیوز سنه لك حیات سیاسیه و اجتماعیه مزده ایلک دفعه

ՆԱՄԱԿԱՏՈՒԺ

آجیق محاربه

چوروم۔ م۔ ر۔ بک۔

مکتوبکزی آلدق یقیناً طرفه مزدهیم

Տարուն.— Կ. Պետրոսեան.— Ա. քիւէն սկսեալ զրկուեցաւ. ձեր հասցէին:

Եղոկիա.— Մ. Մ.— Ձեր ցոյց տուած հասցէներուն քերքերը զրկուեցաւ նորերու կ'սպասեն:

Էրայա.— Կայծակ Գար.— Մ. Սիմոն.— Լանի նամակին համաձայն ձեզի գործակալ նամակելով Ա. քիւէն սկսեալ Յակոբ օրինակ քերք զրկեցին. Ձեր ջանքերուն կ'սպասեն:

Վ. Քեօփուի.— Յ. Ք.— Մեզ երկու օրինակ Լաֆ հոս գալ ուրիշ քննիչ յանձնախումբ կայ

Սիմ Հանի Գիւղ.— Ս. Հ.— Դախորդ քիւերը հանեցէք վերադարձնել, Ս. Էֆենտիին զրկուեցաւ:

Կ. Պոլիս.— Հ. Ա.— Ձեզ երկու օրինակ կը զրկուի ինչպէս նաեւ Պէյրուք Ս. Ալունեանի:

Ջիլէ.— Ս. Ո.— Միայն Ձեզի կը զրկուի միւս քիւերը հանեցէք վերադարձնել:

Զորում.— Արծ. Տ. Անահիտ հայր.— Ձեր ջանքերուն եւ զգացումներուն համար անկեղծօրէն շնորհակալ ենք: Ձեր ցոյց տուած հասցէներուն զրկեցին. Ձեր առաջարկը սիրալոյսով կ'ընդունին:

Պոռուս.— Ս. Տ.— Ստացանք համակնիդ Լ. դրամը: առանձին համակ կը գրուի: Ձեր ափերուն կ'սպասեն:

Սիւլագ.— Տօֆ. Սիւնի.— Ստացանք համակնիդ Ձեր հրահանգին համաձայն կը

ՄԱՐԳՈՒԱԾ ԹԵՐԹԵՐ

Մարգուան Տօֆ Գ. Օգտնեանք խմբագրութեամբ հրատարակուող «Հայկունի» եւ Տեար Մ. Վարժապետեանի խմբագրութեամբ հրատարակուող «Բողբոջ» նոյնպէս Պոլիս Համալսարանի խմբ. հրատարակուող «Կոհակի» Բ. օրանի բաժանորդագրութիւնները բացում եւ փութացէ՛ք բաժանորդագրուիլ, այդ օգտաւաս եւ լաւ խմբագրում քերքերուն:

Երկիր.— Ս. Կ.	Հնչակեան կիսաւաքաքները	Կ. Պոլիս փոս. արկղ. Թ. Գ.	20 դր.
Կայծ.— «	«	«	«
Կոհակ խմբ. Հ.	Արամեանց շաքարաքերը	«	«
Պահակ.— Շաքարաքերը	կիսալ. օրկան Վեր. Հնչ. կուսակց. Պոռոն		2 ձր.
Վանսոսպ.— Կիսամետայ հանդէս	Վանի Ս. Ք. Ը.ի խմբ. Յ. Աւագեան		23 դր.
Իրիս.— Կիսամետայ գաւառաքերը	խմբ. Պոնտալի (Եղոկիա)		20 «
Աւեստան.— Շաքր. Իզմիր	գրաստէն Մ. Թոգանեան		15 «
Հայկունի.— Կիսամետայ քերք	Մարգուան խմբ. Գ. Օգտնեան		15 «
Նոր Այգ.— ամսաքերը	Մարգուան խմբ. Բրոն, Մանիսանեան		20 «
Բողբոջ.— ամսաքերը	«	Մ, Մամիկոնեան (Վարժապետ)	8 «

գործադրուի միջոց լուրերու կ'սպասեն:

ՄԱՐԳՈՒԱԾ ԳԻՐԿ

Վարան.— Հուրիկէք շարգրարը.— Հրատ. «Կիւքնապերի» տարան Մարգուան, 15 հալասառ քութիւնէն ազատական շարգրներ եւ 18. Ին 1 դր.

ՄԱՐԳՈՒԱԾ

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԹԱՊԻՊԵԱՆ

ՍՄՍՍՍՍՍ

Ոսկի գործուն եւ սրիճ նաեւ սէշի-յո, 8 արհեստական ասամներ շինելու Անտիկեան մեքոսը սորվիլ ուզող բոլոր ասամնաբոյժներու կը յայտարարէ թէ ինք պատրաստ է այդ մեքոսը սորվեցնել նպաստաւոր պայմաններով:

سیفورطه جی

سیمون قارقیان

آماسیه

لا نیویز عمر سفورطه سی ولایبرال حریق

سیفورطه قومانیه لرینک اجیتی در.

مناسب شرائطه هر نوع سیفه. نه بشوری

یابار. آرزو ایدنلر بر دفعه تجربه ایتسونلر

چیشیان اارتین آغا دکانک اتصلنده باتمانی

۵۰ (الی) باره به معدن گوری صاتیور.

هر کس فرصتدن استفاده ایتسون.

شرائط اشترا
بر سنه لکی بر مجید
اللی آیلنی یارم مجید در

مدیر مسئولی

حایقارون طیبیان

جا خود

سر محرومی مناش ایکیجیان

طشړه منادلسی

سیاسی فی آردی اقتصادی و اخلاقی غزته دو

هر اوز بش كونده بر شمر اولدوز

نومسرو

۵۹ کاغذ اول ۱۲۶۷

و نجي سنا

محتويات

عاشق و زینل

وحدت عنانہ

امامیه مبعوثی عارف فضلی

اوراف وارده

عمر لطفی

مظہر

حوادث متعدده

مطبعه مزده رجبہ از منیجہ روجہ فرانسزجہ و انگلیزجہ ایسانلریلہ ہر نوع اعلانات،
اوراق بحاریہ، قارت ویزنلر، مکتوب باشلری، کتابلر، غزنہلر و مطبوعانہ ٹائڈ ساٹر ہر نوع
ایشار غایت تمیز و مزاق اوزرہ طبع اولیور۔ مقصد یگانہ من محترم مشتریلرمزی نمون
ہوونانن و یاردیمیان شرکاسی
قلماقدر۔

Տպարանիս մէջ Տաճկերէն, Հայերէն, Բաւարէն, Իտալերէն, եւ Անգլիկերէն լեզուներով ամէն ժամակ Ազգեր, Կաճառականական քրիստոնէական Վարձ վիճիքներ, Իմաստագլուխներ, Գրիներ, Թերթեր եւ զաւգրազան ուրիշ ամէն ճեման գործեր՝ ինքս մաքուր եւ ճաշակաւոր կը զաւգրդէին: Այնպիսի նպաստակնիս է գոհ բողոյ յարգելի յաճախողներ:

ՅՈՒՆԱՆԵԱՆ ԵՒ ԵԼՄՏԸՐԵԱՆ

مطعمه هووانسان و يارد عمان